

Տարեկան գինը 10 բուլբ, կէս տարվանը 6 բուլբ:

ԹԻՖԼԻՍԻՄ գրվում են միմյաջյն խմբագրատանն մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են սւղղակի

Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առևանգողներին 10-2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերից) :

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են

Իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսիսեան դպրոցի վճիռը։— Ն ե բ ք ի ն ա ե
ս ու թ ի ն ։ Ներքին լուրեր։— Ա բ ա ք ի ն ա ե
ս ու թ ի ն ։ Բերքին դաշնագրերը, Անգլիայի
իտալիա, Գերմանիա, Նամակ թուրքիայից։—
Աջալիի հեռագրերն։— Ձայտաբարութիւններ։—
Տեղեկացոյն։— Բ ա ն ա ի ր ա կ ա ն ։ Հին-Բայա
զէթի յրմակայները։

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՎՃԻՌԸ

Դպրոցի տեսուչ Մանգինեանցի
իննդիրը վճռվեցաւ: Մանգինեանը
արձակված է: Տայց ի^նչպէս:

Հոգաբարձութիւնը սկսեց ա-
դաշել Մանդինեանցին որ մնայ
իր պաշտօնի մէջ: Յուլիսի 19-ի
նիւտում հոգաբարձութիւնը ցոյց
տուեց որ չէ ցանկանում հրաժար-
վել իր մշտական անորոշ գործու-
նէութեան եղանակից՝ նա կամեցաւ
հաշտեցնել Մանդինեանցին ու-
սուցիչներին հետ և թէ տեսչին,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԻՆ-ԲԱՅԱԶԷԹԻ ՇՐՋԱԿԱՆԵՐԸ

I

Այն լուրը, որ բերեց մեզ Լրագիրը, իբր թէ Բայազէթի Սանջակը կրկին վերադարձնվում է Թիւրքիային, յայտեց իմ մէջ ցանկութիւն՝ շըրջել գոնէ Բայազէթի շրջանը և այս երկիր վերաբերութեամբ մի կարճատև նկարագիր հաղորդելն հայ ընթերցող հասարակութեան «Մշակութայն» թերթում, և այդ ցանկութիւնը իրագործելու նպատակով մի ծառայական յանձնարարութիւն խնդրելով՝ յունիսի 10-ին ճանապարհ ընկալ զէպի Գիւղէին գիւղը։ Եթէ օր միայն ունենով իմ իրաւանց տակ վճռեցի լինել Սուրբ-Սահմանու վանքում և մի քանի անելի նշանաւոր անդերս միայն Գիւղէի Բայազէթից յետոյ թողքով տեղի է բռնում թէ իր դերքով և թէ իր թագամարդութեամբ. բնակիչներն են շուրջեր, որոնք նստակեաց կեանք վարելով պարապում են հողագործութեամբ, հողի գլխաւոր արտաբերութիւնն է ցորեն և գարի։ Այստեղի ցորենը Բայազէթի շրջանում աւալին տեղն է բռնում իր շաւյառութեամբ և Այս գիւղը երբեմն տախկան Թիւրքիայի վաճառականական կենտրոնեանց մինն է եղել։ Նա ընկած է Պարսկաստանից Տրապիզոն տաղի արանդիտ ճանապարհի վրա՝ Բայց այժմ ներկայացնում է մի աղքատ գիւղ։ Գիւղիկնից ճանապարհը երկու ձիւղի է բաժանվում, որոնց մէկը և գլխաւոր տանում է զէպի Սուրբ-Սահմանու վանքը, որ Գիւղիկնից մի ժամի հեռաւորութեամբ տարածութիւն ունի, ևս Գիւղիկնից ուղղակի գնացել Ս. Օհաննու վանքը։ Ս. Օհաննու վանքը կանգնած է մի սարի ստորոտում՝ Եփրատ գետի աջ ափում մի ամենապզուզեցիկ հովտում, Սա համարվում է Ս. Գրիգոր լուսաւորչի ժամանակակից։ Այս ամենաստանը ծառայել է կարծես ոչ միայն նրա մէջ աղօթելու, այլ և նա ծառայել է հին ժամանակներում, ինչպէս և նկիւղին պատերազմի ժամանակ թշուառ հայերին բարձրաւոր սպասակողներն զէմ պաշտպանելու համար իբր մի ամրոց, նա պատմութեան և պատմական ամուր և բարձր պարիսպով վանքի

որի գործունեութենից վերջնե Ժա-
մանակ, ինչպէս իմացանք, զԺգոճ
էր, թէ վարժապետներին, որոնք
Ներսիսեան զպրողը իրանց հա-
մար անկեւանոց են դարձրել,
կամեցաւ կրկին պահել ուսում-
նարանի մէջ....

Եթե հոգաբարձուները համոզվեցան որ տեսուչը անընդունակ է իր պաշտոնը շարունակելու, եթե, պարզ տեսնում են որ պ. Մանգինեան այսօր պահանջում է արձակել նոյն անընդունակ և փաստակար ուսուցիչներին, որոնց գեռերէկ համարում էր ընդունակ և օգտուէտ դպրոցի համար և չէր համոճայնվում արձակել, իր նոյն իսկ հոգաբարձութիւնը առաջարկում էր մաքրել դպրոցը այդ անպէտք ուսուցիչների մի քանիսնէրից, —¹նչև ուրեմն հոգաբարձու-

որը կողմը պարսպի մէջ չխնկած են եղել բաւականին ընդարձակ սենեակներ, թէ միաբանութեան և թէ ուխտաւորների համար, մի երկ-յարկանի ուսումնարան, որի մէջ սովորելիս են եղել 25—40 աշակերտներ, և արուեստի անասնոց համար. իսկ այժմ այդ ամեն հոյակապ շինութիւնների աւերակները և փլուտակներն են ներկայա-նում անցորդին: Վանքի միաբանութիւնը բաւականացել է միայն աղօթելով, նա պատրաստե-ն է միաբանութեան համար ժառանգորդներ, որի համար և ուսումնարանը կոչվում էր «Ճառանգաւորաց» և շրջակայ գիւղերի համար լաճանաւեր է պատրաստել, նոյնպէս և պարագլում էր անա-նիապահութեամբ և հողագործութեամբ: Վանքը չխնկած է սե սրբատաշ բաւականին պինդ քարից հողորս վիթխարի մեծութիւն ունեցող սիւների վրա: Նա ունի 65 քայլ երկարութիւն և 45 քայլ լայնութիւն արտաքին կողմէ: Վանքի պատերը իր մարդաշափ բարձր են կտուրի հրացան ար-ձակելու համար ծակելով: Սինն մի սապատա-կութեան ժամանակ վանքի շրջակայ գիւղերի հաճախը ժողովել են այստեղ կանայք և երե-նայալք վանքի մէջ, իսկ տղամարդիկ վանքի կը-տուրը և յիշած ծակերից հրացաններ արձակե-լով պաշտպանվել են բարբարոսների դէմ: Այս-պէս պաշտպանվել են և վերջին պատերազմի ժամանակ մինչև ուստաց զօրքի Կարանդա-ւի վերադառնալը: Մինչև վերջին պատերազ-մի սկսելը վանքը բաւական հարուստ է եղել թէ իր մատենադարանով և թէ ներքին զար-գարանով, սակայն այժմ նա մի տխուր տե-նարան է ներկայանում: Բոլոր դռները և լու-սանոցները քար ու քանդ արած, թէ զգրեթե և թէ զանազան արքունիների տաքի առնված լայմ ալրված են: Քուրդերը չեն բաւականացել լանքը կողոպտելով, նրանք քանդել են վանքի տարանները, պահարանները, զուցէ զանա՛ն որո-նելու գիտամբ: Ահա տեսնում ես վանքի պա-տերներ իրա փորագրված զանազան սրբերի պա-տերներ, որոնց աչքերը մըղախով փորած, գլուխ-երը և ոտները կտրած: Ինչպէս ես անձամբ տեսայ բարբարոսները փորձ են փորձել և վանքի միմէջը տապալել, բայց յայտնի բան է այդ րանց չէ յաշողին Վանքի արեւելեան պատի դո-րը երկարութեան վրա երևում է մի չարք արձա-նագրերի, կայք տառերը բոլորովն աղաւաղված և քանդակաւ իրարայ անկարելի է լինում: Միաբա-նութեան վարդապետներից մէկն առաց, որ այդ

Թիւնը չունեցաւ իր համոզմունքը
քաջութիւնը և մի անգամից չե-
վճռել արձակել Թէ անընդունակ
համարված տեսչին, և Թէ ան-
պէտք ուսուցիչներին....

Մենք չը գիտենք ինչ ձևի օր-
ձանադրութիւն է կազմել հոգա-
բարձութիւնը 19-ին յուլիսի իր
կայացած նիստի մէջ, և զարմա-
նում ենք որ այդ տեսակ նշանա-
ւոր հարցերի վերաբերութեամբ
կայացած պրօտոկոլների հետ Ներ-
քիսեան ղարոցի հոգաբարձութիւ-
նը չէ ծանօթացնում հասարակա-
կան կարծիքը մամուլի միջնորդու-
թեամբ, բայց լսում ենք թէ կազ-
մված արձանագրութեան մէջ հո-
գաբարձութիւնը ի նկատի առաւ
ղարոցի ուսուցիչների կազմակեր-
պութեան փոփոխելը:

Լեթէ այդ ճշմարիտ է, մեզ

արձանագրերի արտագրված են եղել մագաղաթի վրա, բայց վերջիններս էլ վանքի միւս թանկագին ձեռագրերի հետ ջութղերի բարբարոսութեանը զոհ են գնացած։ Այժմ վանահայր վարդապետը ձեռք է զարկել կարողութեան չափ նորոգել և կարկատել վանքը՝ Սուրբ Օհաննու վանքից եւ ճանապարհարհ ուղղեցի գէպի Երանելահիւսում Տաճկաստանի սահմանագլուխը, Ես դիտմամբ իմ ճանապարհորդութիւնս չարունակեցի առաւօտեանը՝ եղանակն տափարակ լեռների վրայով, որոնք Ալաղաղի մի մասն են կազմում։ Առաւօտեան ղով է մեզմիկ զեփնուք ծածանելով խընկալոտ աքաղաղ խոտը և իր չինխեր խառնելով թռչունների քաղցրիկ դաշայլաների հետ զմայլեցնում է մարդուս մի ախարժ տպաւորութեան ներքոյ։ Լեռների և բլուրների երակներէց անհամար աղբիւրները կարկաջառոտ վազելով ձորակների միջով կազմում են պտտական Եփրատի սկիզբը, որին այստեղ Միւրաքս գետն էն կոչում։ Այս լեռնաթմբի մուր հասցնող և ճանաչող էս տուգ լեռների անուշահոտ, զոյնզոյն ծալիկներով զարդարված գագաթների վրա նստած ժամանակ կարծում ես թէ՛ զսնվում ես նախահօր եղեմական բնակարանի դաժան առաջ։ Բազրեան լի լեռների բնութեան ներգործած գեղեցիկ և ախարժ տպաւորութիւնը նկարագրելու և այս տպաւորութիւնն ըմբամբ տարմի տալու համար, հարկաւոր է անաստեղծի հմուտ գրիչ։ Եւ ասա հայի արիւնով ներկած այդ գեղեցիկ սարերին և դաշտերին տէր է ներկայանում կիսավայրենի և բարբառոտ ջութղը։ Նա վայելում է թշուառ հայից լողդպտածը՝ հայ երկնքի տակ, հայ դաշտեւում և լեռների գագաթների վրա հանդորդ ոգով տանձինն իմն բարբարոսների յատուկ ախորժակով։ Այն օւթէին երբ լեռների գագաթների վրա նստած հրճվում և զմայլում են բնութեան եղեցեցութեամբ, երբ պայծառ արթին իր գլուխը հանելով բարձր սարերի գագաթների ետեկց արձեն ողջունում է քեզ, երբ նրա կեանք խորով ցողերը սփռելով լափում է համեմատ իր սարածիկներուն, բուռեղէնների վրա հանգչող և տրանց կենդանութիւն տուող ջրային հիւլալիւթը, ակամայ միտք ես բերում, որ քո մայրենի հողի վրա պանդուխտ ես չլծպատմված վայրենի՝ քրդերով որոնք՝ առանձին հպարտութեամբ և պարծանքով այդ գեղեցիկ դաշտերի սարերի տէր են կոչու իրանց, և յանկարծ

մնում է միայն աջողութիւն ցանկանալ հոգաբարձութեանը իր բռնած ընթացքի մէջ, ցանկանալ որ նա վերջապէս մաքրի դպրոցը ուսուցիչների այն խումբից, որոնք, ինչպէս տասացինք, տասնեակ տարիներով իրանց սեփականացնելով՝ Վերսիսեան դպրոցը, նրանից մի տեսակ անկեղանոց են շինել անպետք և հացի կարօտ, չինչ գիտութիւն չունեցող և ուրիշ տեղ դասատուութիւն անել անկարող մարդիկների համար, որոնց համար ինտրիգաներ լարելը մի տեսակ կենսական պահանջ է դարձել և որոնց ներկայութիւնը Վերսիսեան դպրոցում պատճառ է լինում որ այդ մեր գրեթէ միակ միջնակարգ հիմնարկութիւնը դատապարտված է մնում մշտական անշարժութեանը:

Q. U.

միասնուայ զգալով դէպի քեզ չընապատողները, լուռ և մունջ անդիտակցաբար վերհենալով տեղիցը չարունակում ես ճանապարհդ քուրդ ուղեկցելը հետեւելով:

Կեռ ապրիլի երկրորդ կիսամասնում քուրդը բարձրանում է հետգհետէ իր ձմեռվայ խրճիթից համեմատ ձիւնի հետգհետէ հալվելուն զէպի կորցրուաց լեռնէն ձիւնաբաններ իր ոչխարի հօտերով և մատակ ձիւնների երամայներով: Նա մեծ մասամբ ոչխար և ձիաներ է պահում, և ասել չի ուզի, որ նրանք ինչպէս և տեղացի հայերը նախահօր հովուական սխտեմայից ձեռք ենն Վերցնում, և գուցէ առաջինները երբէք չոր անասնապահանք կանսններին չը հմտանան, որովհետև նրանք ամենխտտութեամբ արհամարհում են քաղաքակրթութիւնը և խուսափում են նրանից: Ոչխարները ըստ մեծի մասին սպիտակ բուրձ ունեցողներ են, իսկ ձիաները պատկանում են մեր երկրում հռչակված «քահանայ» կոչված տեսակին, և վերջիններս քրդերի մէջ ծախվում են 50—300 միլէն անգամ և 500 միլէրով: Շատ քիչ կը պատահի, որ քուրդը համաճանրվի ծախելի իր մատակ ձին, և եթէ պատահի ծախել անպատճառ հարկից ստիպված, այն ժամանակ նրանց մէջ ընդունված է, որ ծախելու ձիու առաջին էջ ծնունդը վերադարձնելու է ծախողին առանց փողի, իսկ դրա փոխարէն ծախողը ձին ծախելու ժամանակ զիջողութիւն է անում նրա գնում, օրինակ, եթէ ձին արժէ 100 ռուբլ. ծախում է 80 ռուբլով: Բայց որովհետև ծոյլ քուրդը չէ հոգում ձմեռվայ համար ոչխարների և առհասարակ անասունների համար կերակուր պատրաստել և անասունները ձմեռը որանք պէտք է խոր ձիւնի տակից կերակուր որոնելով ապրեն մինչև դարնան զալը, ուստի դարձուքին անասունների մէջ մասը սատակում է իրենարուցելուց, իսկ մնացած մասը յունիկի կէսին հազիւ գերանալով հասնում են իրանց ընտանիքներին: Քուրդները կտվեր առհասարակ լատ փութը թւով են պահում և այնքան միայն որ իրանց տեղափոխելու ժամանակ հարկաւոր թւով բեռնակիր եղներ ունենան: Նրանք ամեն ծանրութիւն բարձում են իրանց եղների վրա և քանդեն իր կովերի վրա, եթէ տան ծանրութեան համեմատ եղները չը կանս:

Մատթէոս Տէր-Պետրոսեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք որ վեհափառ կաթողիկոսը դիտաւորութիւն ունի փոխանակ սրբազան Գաբրիէլ Ալփազովսկու Ս. Էջմիածնի ճեմարանի տեսուչ Անդրէաս Կարապետի նշանակել:

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, յուլիսի 19-ի գիշերը իր նիստի մէջ վճռեց զպրոցի տեսուչ Մանգինեանցի առաջարկութիւնը: Մանգինեանց իր պաշտօնից հրաժարեցրած է, իսկ նրա նախաւորող հինգ ուսուցիչները մնում են իրանց տեղերի վրա:

Երկուշաբթի, յուլիսի 24-ին Մեռելոց անուանված տոնի պատճառով տպարանում չեն բանում, այնպէս որ «Մշակի» համարը յուլիսի 25-ին, երեքշաբթի օրը չենք կարող հրատարակել, այլ մեր լրագրի հետեւալ № 125 կը հրատարակվի չորեքշաբթի, յուլիսի 26-ին:

«Մշակի» կէս տարվայ ստորագրութիւնը շաբաթակից է: Միայն մեր համարներէն № 121 դժբաղդապէս բոլորովին սպառված է, այնպէս որ այդ համարը ուղարկելու չենք նոր գրվորներին:

Խոնարհաբար խնդրում ենք «Մշակի» այս տարվայ բաժանորդներին, որոնք դեռ չեն վճարել իրանց տարեկան վճարը, շուտով հասցնել իրանց պարտքը խմբագրութեանը:

«Тифл. Вѣст.» լրագրում կարգում ենք աւագ-ցենզոր պ. Մէլքե-Մեհրաբեանցի հետեւեալ նամակը: «Նրէկ երեկոյեան թատրոնում դուրս գալով այգի, ես լսեցի իմ հետեւից՝ «Ինչպէս էք համարձակվում բռնել» ձայնը: Չը կարծեմ որ այդ ինձ էր վերաբերվում, ես ոչինչ ուշադրութիւն չը դարձրի, յանկարծ ինձ դիմում են հետեւեալ խօսքերով «Չեղ եմ ասում, դու армянская» ինձ ուրիշ ոչինչ չէր մնում, բացի ներողութիւն խնդրելուց, եթէ ես ձգնարիտ է անգիտակցաբար բռնեցի նրան բազմութեան մէջ: Բայց այդ էլ բաւական չէր: Յետոյ ես իմացայ, որ այդ պարտին ազգանունը Լացինսկով է: Յանձնելով հրապարակութեանը այդ տխրալ անցքը, ես կը կամենայի որ հասարակութիւնը արժանաւորապէս գնահատէր պ. Լացինսկովի այդ տեսակ վարմունքը, որ հազած ունի սպանօրի գիւղութեան օֆիցերի համագրեւորը, ուրեմն մի մարդու որ ինչ և իցէ կըրթութիւն ստացած պէտք է լինի:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Յօդ. 40) Սերբիայի և Ռուսիայի մէջ մինչև դաշնադրութիւն կապելը, Օտոմաններուն կայսրութեան սահմաններում ծանաւարհորդող կամ բնակվող սերբական հպատակները կենթարկվին միջազգային օրէնքների ընդհանուր կանոններին:

Յօդ. 41) Սերբական զորքերը, ներկայ դաշնադրութեան հաստատման փոխանակութեան ժամանակից, երկու շաբաթ ժամանակաւիջոյց յետոյ, պարտաւոր են իշխանութեան նոր սահմաններում չը մտնող բոլոր հողերը, գաւառները:

Օտոմաններուն զորքերը Սերբիային զեծած հողերը կը գաւառակեն մի և նոյն ժամանակամիջոցում: Բայց նրանց կը տրվի և լրացուցիչ ժամանակամիջոց, նոյնքան երկարաւուրութեամբ, ամրացած կէտերից դուրս գալու համար և դուրս բերելու այն տեղերից պաշարներ և պատերազմական մթերք, և նոյնպէս այն գէնքերի և ուրիշ առարկաների ցուցակ կազմելու համար, որոնց անկարելի երեւեցաւ անպաշտ տանել:

Յօդ. 42) Սերբիան իր վրա է ընդունում Օտոմաններուն կայսրութեան պետական հարկի մէկ մասը, ներկայ դաշնագրով իր հետ միացրած նոր հողերի համար: Այս գումարի

քանակութիւնը ձգնարիտ սկզբունքների վրա պէտք է որոշեն իշխանութեան ներկայացուցիչները Կ. Պոլսում: Բ. Իրան հետ հարորդակցութեամբ:

Յօդ. 43) Բարձրագոյն դաշն կապող կողմերը ճանաչում են Բուլղարիայի անկախութիւնը հետեւեալ երկու յօդուածների մէջ բացատրված պայմաններով:

Յօդ. 44) Որոշում է դաւանութիւնների ազատութիւն (կրկնութիւն յօդ. 5) հետեւեալ աւելումներով:

Բոլոր դաշն կապող և ուրիշ պետութիւնների քաղաքացիները պէտք է վարմունքի կատարեալ ազատութիւն վայելեն Բուլղարիայում առանց զանազանութեան նրանց դաւանութիւնների:

Յօդ. 45) Բուլղարական իշխանութիւնը տալիս է Նորին Մեծաւթեան բոլոր Ռուսաստանի կայսրին, 1856 թվի Փարիզի դաշնադրութեան զօրութեամբ Ռուսաստանից խլված Բեսարաբիայի մասը, որի սահմանը արեւմուտքից Պրուտ գետի տաշան է, հարաւից Կիւլեւեան ճիւղերի տաշար և Ստարի Ստամբուլի բերանն է:

Յօդ. 46) Դուռնայի գէլտա կազմող կղզիները և նոյնպէս Օձայնի կղզին, տուլչինեան սանջակը, որը ամփոփում է Կիւլե, Սուլին, Մահմուդիէ, Իսալիէ, Տուլչի, Մաշինա, Բաբադաւա, Դիրսովա, Կիւսաէնջէ, Մեքիգիէ գաւառները (կազմը) միացնում են Բուլղարիայի հետ: Բայց դրանից իշխանութիւնը ստանում է Բօրնուշայից դէպի հարաւ գրանվող գաւառը մինչև Սիլեստրայից դէպի արեւելք սկսվող և Սև ծովն մօտ վերջացող գիծը, Մանգալայից դէպի հարաւ:

Սահմանները այնտեղ և եթէ կորոշէ Բօլգարիայի սահմանները որոշելու համար հիմնված յանձնաժողովը:

Յօդ. 47) Զրերի բաժանելու և ձկնորսութեան տեղերի հարցը եւրօպական դուռնայական յանձնաժողովի վճռին կենթարկվի:

Յօդ. 48) Ոչ մի ապրանք անցկացնելու համար իշխանութեան միջով ապրանքից մնաց չի անցնել Բուլղարիայում:

Յօդ. 49) Բուլղարիան կարող է դաշնադրութիւններ կապել հիւպատոսների արտօնութիւնները և գործունէութեան շրջանը որոշելու համար իշխանութեան մէջ գտնված հպատակների պաշտպանութեան գործում: Շնորհիվ իրաւունքները զօրութիւն ունեն, մինչև որ չեն փոփոխվի իշխանութեան և շահ ունեցող կողմերի ընդհանուր համաձայնութեամբ:

Յօդ. 50) Մինչև դաշնադրութեան կապելը, որը որոշում է Ռուսիայի և Բուլղարիայի մէջ հիւպատոսների արտօնութիւնները և գործունէութեան շրջանը, օտոմաններուն կայսրութեան մէջ ճանապարհորդող կամ բնակվող հպատակները, կամ Բուլղարիայի մէջ ճանապարհորդող կամ բնակվող օտոմաններուն հպատակները կը վայելեն միացած եւրօպական պետութիւնների հպատակներին ապա-հովող իրաւունքները:

Յօդ. 51) Ինչ որ վերաբերում է հասարակային աշխատանքների և ուրիշ զրա նման գործերի ձեռնարկութիւններին, Բուլղարիան կը պաշտպանէ իրան շնորհիվ բոլոր ցամաքի վրա, Բ. Իրան պատկանող բոլոր իրաւունքները և պարտաւորութիւնները:

Յօդ. 52) Դուռնայի վրա նաւադնացութեան ազատութեան վերաբերութեամբ հաստատված երաշխաւորութիւնները ապահովելու համար, որը ընդհանուր եւրօպական նշանակութիւն ունի, բարձրագոյն դաշն կապող կողմերը վճռում են, որ բոլոր բերդերը և ամրութիւնները, որոնք գտնվում են գետի ընթացքի երկայնութեամբ Երկաթի Դաշնից մինչև Երանդիկ և Կարսի ճիւղի միջով: Ոչ մի պատերազմական նաւ Երկաթի Դաշնից ցածր

իրաւունք չունի լողալ Դուռնայի վրա, բացի գետային ոստիկանութեան և մաքսատան տեսչութեան թիւթե նաւերից: Օտար պետութիւնների իշխանապահները, որոնք գնացած են Դուռնայ բերանի մօտ, կարող են այնուամենայնիւ ընթացքով հասնել դէպի վերեւ մինչև Դալայ:

Յօդ. 53) Եւրօպական դուռնայական յանձնաժողովը, որի մէջ Բուլղարիան իր ներկայացուցիչը կունենայ, կը պաշտպանէ իր պարտաւորութիւնները և այժմեանից իսկ կը կատարէ նրանց մինչև Դալայը, բոլորովին հողային իշխանութեանից անկախ: Նրա իրաւունքին վերաբերեալ դաշնագիրները, համաձայնութիւնները, իրաւագիրները և վճիռները պահպանվում են իրանց զօրութեան մէջ:

Յօդ. 54) Եւրօպական յանձնաժողովի գոյութեան համար որոշված ժամանակամիջոցը անցնելուց մէկ տարի առաջ, պետութիւնները նրա լեւազօրութիւնը երկարացնելու կամ նրա մէջ հարկաւոր համարած փոփոխութիւնները գործելու վերաբերութեամբ կը համաձայնվին միմեանց մէջ:

Յօդ. 55) Եւրօպական ոստիկանութիւնը կը մշակէ օրէնքներ գետային ոստիկանութեան նաւադնացութեան մասին և Երկաթի Դաշնից մինչև Դալայ վերահսկողութեան մասին, եզրային պետութիւնների պատգամաւորների մասնակցութեամբ, ուր կը համապատասխանեցնեն Դալայից ներքեւ գտնվող ցամաքի կտորի համար կազմած կամ կազմելու իրաւունքների հետ:

Յօդ. 56) Դուռնայական եւրօպական յանձնաժողովը կը խորհրդակցի նրա վրա իրաւունքներ ունեցողների հետ Օձայնի կղզու վրա Փարօս պահպանելու հարցը ապահովելու համար:

Յօդ. 57) Աւստրո-Ունգարիային է յանձնված Երկաթի Դաշնից և նաւադնացութեան ժայռերից առաջ եկած արդիւնքների ոչնչացնելու աշխատութիւնը:

Այն պետութիւնները որոնք սահմանակից են գետի այս մասում նրա ափերին, պէտք է ամեն տեսակ օգնութիւններ հասցնեն որ կա-րող են պահանջվել այս գործերը կատարելու համար:

1871 թվի, մարտի 13-ի Լօնդօնի դաշնագրի 4 յօդուածի վիճիւր, վերջիշեալ աշխատութիւնների ծախսերը ծածկելու համար ժամանակաւոր մաքս վերցնելու իրաւունքները իրանց ուժի մէջ են մնում յօդուած Աւստրո-Ունգարիայի:

Յօդ. 58) Բ. Դուռնայ Ռուսաստանի կայսրութեան տալիս է Ասիայում Արքահան, Ղարս և Բաթում նահանգները, վերջինի նաւահանգիստով, ռուս-թուրքական նախկին սահմանի և հետեւեալ գծի մէջ գտնվող նաւահանգ:

Նոր սահմանը սկսվում է Սև ծովն մօտ և Սան-Ստէֆանօյի դաշնագրի համաձայն գր-նում է Խօրբից դէպի հիւսիս արեւմուտք և Արովլինից դէպի հարաւ գտնվող կէտը, որտեղից ուղիղ գծով գնում է մինչև Գօթօխ լեռը, կտրում է այս գետը և անցնում է Աշմիշկից դէպի արեւելք, ուղեւորվելով ուղիղ գծով դէպի հարաւ մինչև ռուսաց սահմանին պատահելը, որ որոշված է Սան-Ստէֆանօյի դաշնագրով և ձգվում է այդ գծով մինչև Նարիմանի հարաւում գտնվող կէտը, Օլտա քաղաքը թողնելով Ռուսաստանին: Նախկին մօտ գտնված կէտից գնում է դէպի արեւելք, անցնում է Տրէբէնէկի միջով, որը Ռուսաստանին է մնում և հասնում է մինչև Պինէզ—Կայ:

Սահմանը այս գետով գնում է մինչև Բուր-գուզա, յետոյ շեղվում է դէպի հարաւ, թողնելով Բուրգուզ և Ինչիկից Ռուսաստանին: Կարաուզան գիւղից արեւմուտք գտնվող կէտից սահմանը Մէշինիկի վրա է գնում:

որտեղից նա անցնում է ուղիղ գծով մինչև Կասարազ լեռան զագաթը և յետոյ նա ձգ-գվում է Ջարաթան գծով դէպի հիւսիս Արաքսի առուի և դէպի հարաւ Սօնրաբա-սուի մէջ, մինչև ռուսաց հին սահմանը:

Յօդ. 59) Նորին Մեծաւթեան բոլոր Ռուսաստանի կայսրը յայտնում է, որ նա դիտաւորութիւն ունի Բաթումը իսկապէս առեւտրական ազատ նաւահանգիստ շինել:

Յօդ. 60) Սան-Ստէֆանօյի դաշնադրութեան 19 յօդուածի զօրութեամբ Ռուսաստանին տուած Ալաշկերտի հովիտը և Բայազէթ քաղաքը վերադարձնվում են Ռուսիային:

Բ. Դուռնայ տալիս է Պարսկաստանին Կօտուր քաղաքը իր նահանգով ինչպէս վճա-ված էր Ռուսիայի և Պարսկաստանի սահ-մանները որոշող մասնաժողովով:

Յօդ. 61) Բ. Դուռնայ պարտաւորվում է անյապաղ կատարել հայերի բնակած գաւառներում պահանջած բոլոր բարեօրոշմանը և ընթեր-մանը, և նրանց ապահովութիւնը երաշխաւորել չեղեանքից և քուրդերից: Նա այս նպատակների համար իր ընդունած միջոցների մասին պարբերապէս պէտք է յայտնէ վերջիշեալ պարտաւորութիւնների կատարե-լուն վերահսկող պետութիւններին:

Յօդ. 62) Բ. Դուռնայ ցանկութիւն յայտնեց կրօնական ազատութեան սկզբունքը պահ-պանել, յարմարեցնելով վերջինը ամենալայն ընթացքով: Դաշն կապող կողմերը մոզմում են այս ծանուցումը դաշնադրութեան մէջ:

Օտոմաններուն կայսրութեան ոչ մի մասի մէջ կրօնի զանազանութիւնը չէ կարող պատ-ճառ դառնալ մի որ և է անձին հեռացնելու կամ անընդունակ համարելու հասարակային և քաղաքական գործերից, այլ ազատութիւն են վայելում ամենքը և կարող են ստանալ հասարակային պաշտօններ, կարող են մտնել ծա-ռայութեան մէջ և բարձր պատիւներ ստանալ կամ կարող են արդիւնաբերութեան գործու-նեցութեան մէջ զանազան պարապմունքներ ունենալ:

Ամենքը առանց կրօնի զանազանութեան կարող են վկայութիւն տալ դատաստանի առաջ:

Ամեն դաւանութիւնների ազատութիւնը և աստուածապաշտական ծէսերը ամեն բա-նով ապահովվում են և ոչինչ սահման չի դրվել զանազան կրօնների երարկիական կազ-մակերպութեան մէջ, ինչպէս և նրանց յա-րաբերութիւնների մէջ նրանց հոգեւոր գլխ-ների հետ:

Ձանազան ժողովուրդների հոգեւորական ան-ձերը և արեւանքները, որոնք կը ճանապարհ-հորդեն եւրօպական և ափական Ռուսիայի-յում կը վայելեն մի և նոյն իրաւունքները, առանձնաշնորհութիւնները և արտօնութիւն-ները: Վերջիշեալ անձերի, նոյնպէս և նրանց հոգեւորականների, սուրբ տեղերում և ամեն տեղ, բարեգործական և ուրիշ զրա նման հիմնարկութիւնների պաշտօնական պաշտ-պանութեան իրաւունքը տրվում է օտայ պետութիւնների գիւղամասիական և հիւ-պատոսական գործադատներին Ռուսիայի-յում:

Ֆրանսիայի ձեռք բերած իրաւունքները մնաւանդ տրվում են նրան և ոչ մի փոփո-խութիւն չի անվել statu quo-ի վերաբերու-թեամբ սուրբ տեղերում:

Աֆօնեան սարի արեգանքները, ինձ ծագումի էլ լինեն նրանք, պահպանում են իրանց առանձնաշնորհութիւնները և նախկին արտօ-նութիւնները և կը շարունակեն վայելել առանց բացառութեան, կատարեալ հաւասա-րութիւն արտօնութիւնների և իրաւունք-ների մէջ:

Յօդ. 63) 1867 թվի, մարտի 30-ի Փա-րիզի դաշնագրով, նոյնպէս և 1871 թվի, մար-տի 13-ի Լօնդօնի դաշնագրով պահպանվում

են այն որոշումներն մէջ, որոնք չեն խափան-
վում և չեն փոխարկվում վերոյիշեալ յո-
գուածներով:

Յօդ. 64) Ներկայ դաշնագիրը կը հաս-
տատվի և հաստատման փոխանակութիւնը կը
կատարվի Բերլինում երեք օրվայ ժամանա-
կամիջոցում, կամ օրքան կարելի է վաղ:

Որի զօրութեամբ լեզուները ստորագրե-
ցին այդ կնքելով նրան պետական կնիքներով:
Կատարվեցաւ Բերլինում, հազար ութ հա-
րիւր եօթնասուսուն ութ թիւի, յուլիսի տասն
երեք երրորդ օրը:

ԱՆԳԱՆՈՒՄ

Լօնդոնից հաղորդում են յուլիսի 16-ին
որ լորդ Բիկոնսֆիլդը այն օր մտել է Լօնդոն
ուր շատ փառաւոր հանդեսով ընդունել են
նրան: Արդէն Դուլլըր հասած ժամանակ,
քաղաքապետութիւնը դիմաւորել է յաղթա-
կան հանդեսով և ժողովրդի մեծ բազմու-
թիւն հաւաքված, կեցցէի աղաղակներով ըն-
դունել են նրան: Լորդ Բիկոնսֆիլդը քաղա-
քապետութեան արդէսին պատասխանած ժա-
մանակ, յատկացրել է իրան տրված գովեստ-
ների մէջ մտքը գլխաւոր աշխատակից մարկիզ
Սալիսբըրիին: Յօյս ունենալով որ, ասել է լորդ
Բիկոնսֆիլդը, կօնգրէսից ստացված արդիւնք-
ները պատիւ կը բերեն թագուհուն և բաղ-
դաւոր հետեւանքներ կունենան մեր երկրի և
Եւրոպական խաղաղութեան համար: Լորդ
Սալիսբըրիին էլ ինձ չափ աշխատեցաւ երկրի
համար: Նոր Լօնդոն մտնելով հասել է Չա-
րլինգ Կրօսի կայարանը, ժողովրդի մեծ բազ-
մութիւնը որ այդ երկաթուղու կայարանից
մինչև նրա պալատը շարված է եղել կար-
գով: Ոգևորված աղաղակներով ընդունել են
նրան:

Լորդ Սալիսբըրիին Բերլինից յուլիսի 13-ի
դաշնագիրը անգլիական կաբինէտին հաղոր-
դած ժամանակ, մի երկար հեռագիր է ու-
ղարկել որի մէջ ազգու կերպով պաշտպա-
նում է կառավարութեան քաղաքականու-
թիւնը այն մեղադրանքի դէմ թէ ապրիլի
1-ի իր շրջաբերականի մէջ յայտնած մտքե-
րից հեռացել է:

Այդ հեռագիրը վերջանում է այս խօս-
քով որ յանդիմանական խրատ և միանգա-
մայն սպառնալիք է Թիւրքիայի համար:
«Թիւրքիայի դրութիւնը կախում ունէ այժմ,
ասում է լորդ Սալիսբըրի, վերանորոգու-
թիւնները անկեղծութեամբ զործագրելուց,
ի՞թէ օգուտ քաղէ այս յարմար առթից: Հա-
ւանական է թէ Թիւրքիան այլ ևս չի ու-
նենայ այսպիսի յարմար առիթ»:

Համայնքների խորհրդարանում յուլիսի
16-ին պ. Բուրկ պատասխանելով պ. Բալ-
ֆորին, ասել է թէ ինքն ոչինչ տեղեկութիւն
չունէ կառավարական փոփոխութիւններ եղած
լինելու մասին Տոնիսում և Տրիպոլիում:
Նօրթկոտ պատասխանելով Պ. Դիլլին, ասել
է թէ Թիւրքիան պարտաւորված չէ զօրա-
բանակ պահելու իր երկրի պաշտպանութեան
համար Ասիայում Պատասխանելով պ. Հէյ-
տերին, ասել է թէ ոչինչ տեղեկութիւն
չունէ սուլթանի դէմ եղած այն նոր դաւա-
դրութեան մասին որ գրում են լրագիրները:

Լօնդոնից հաղորդում են յուլիսի 16-ին թէ
արտաքին գործերի մինիստրութեան միջ գրա-
դրութեան պաշտօն ունեցող պ. Մարվին որ
մեղադրված էր թէ ռուս-անգլիական յիշա-
տակազիրը գաղտնապէս հաղորդել է «Globe»
լրագրին, դատարանի վճռով արգարացել է:

ԻՏԱՒԱՆ

Հոսից գրում են յուլիսի 12-ին թէ ար-
տաքին գործերի մինիստրութեան բիւրօէ-

տի վրա վեճաբանված ժամանակ սենատում,
հարցում է եղել Բերլինի կօնգրէսի վերաբե-
րութեամբ: Հասարակայնի շինութիւնների մի-
նիստր պ. Բօկկարինի պատասխանել է թէ
տէրութիւնները պարտաւոր են առ այժմ
գաղտնիք պահել (որովհետեւ կօնգրէսը դեռ
չէր վերջացել այդ ժամանակ) և թէ լաւ չէ
որ և ինչ գաղտնիքիւն անել կօնգրէսի ա-
րածի վրա, առաջ քան թէ որոշ կերպով
ճանօթանալը նրա հետ: Յիշեցրել է նաև
պ. Կայրօլին ասած խօսքերը մայիսի 4-ին
սենատի նստում թէ խաղական կառավա-
րութիւնը հաւատարիմ կը մնայ Նապոլայի
ազգային իրաւունքի հիմնական սկիզբներին:

Հաւանական է որ այդ հարցումի պատ-
ճառ եղած լինի այն աստիկ յուզմունքը
որ լինում է այժմ Նապոլայում անգլո-թիւր-
քաց յունիսի 4-ի դաշնադրութեան և Բօս-
նիայի Աւստրիայից դրաւելուն համար: Իսա-
լեան լինելով Միջերկրական ծովի մեծ պե-
տութիւններից միւր, իրաւունք ունէ պա-
տուախնդիր լինել իր ազդեցութեան համար
արեւելքում և պաշտպանել իր շահերը: Հե-
տեւապէս, բնական է որ յուզմունք ծագի
Նապոլայի ժողովրդի մէջ երբ Անգլիան և
Աւստրիան օգուտ քաղելով կօնգրէսից, ա-
ւելի մեծ ազդեցութիւն ունեցան այժմ արե-
ւելքի վրա: Բայց մի՞թէ այդ ժողովրդական
յուզմունքը կառաջնորդէ մի նոր պատե-
րազմի: Առ այժմ նոր պատերազմ հաւա-
նական չէ երևում: Խաղաղութիւնը վճռված
է այսօրվայ համար, թէպէտ կօնգրէսը չը
վիշաքից ապագայ խառնակութիւնների սեր-
մերը որոնք ցանկւած են քաղաքական ասպա-
րիզում: Այսօր Ֆրանսիան որոնում է իր շա-
հերը խաղաղութեան մէջ. նա չի սպասի իր
ոյժերը երկրորդական համարվող արտաքին
խնդիրների համար. այլ կը պատրաստէ իրան
մի մեծ ազդեցութիւն ունենալու, մի մեծ
դեր խաղալու համար ապագայում: Գերմա-
նիան այնչափ եռանդով չէ վարվում դէպի
արեւելեան խնդիրը որ յանձնառու լինի պա-
տերազմի վտանգներին և զրգուի իր հարե-
ւանի վեճիմարութիւնը: Ռուսաստանը, ա-
ռանց իրան ենթարկելու մի նոր պատերազմի
ծանր և անգուշակելի հետեւանքներին, կո-
րող է վիշաքիլ անգլո-թիւրքաց դաշնադրու-
թիւնը, ի՞թէ այնչափ մեծ արժէք տալիս
է նրան, հրաժարվելով Հայաստանի ամբող-
ջութիւններից և Բալթիկի նաւահանգստից:

Բայց ինչպէս երևում է անգլո-ռուսական
համաձայնութեան պայմաններից որոնք հրա-
տարակցեցան «Globe» լրագրում և որոնց
բովանդակութիւնը արդէն արտասովեցաւ
«Մշակի» մէջ, Անգլիայի հովանաւորութիւնը
թիւրքական Սաիայի վրա յայտնի էր Ռու-
սաստանին առաջ քան թէ կօնգրէսի հաւաք-
վելու և դրա համար արդէն համաձայնված
էին իրար հետ: Աւստրիան ուրախ է որ մի
ընկեր գտած է Թիւրքիայի բաժանման հա-
մար որ կը լինի զօրաւոր դաշնակիցը Մի-
ջերկրական ծովի վրա: Մնում է միայն Բոս-
նիան որ չի յանդգնի առանձին պատերազմ
բանալ: Հաւանական է թէ Բերլինի դաշնադ-
րութիւնը շատ կարճ կը տեւէ քան թէ Փա-
րիզի դաշնադրութիւնը, բայց դեռ ամեն
տէրութիւն կը զգուշանայ պատերազմից: Առ
այժմ Հռօմի պաշտօնական լրագիրները աշ-
խատում են չափաւորել այն տխուր տպա-
ւորութիւնը որ ունեցաւ Նապոլայի հասա-
րակական կարծիքի վրա Աւստրիայի և Անգ-
լիայի բռնած քաղաքականութիւնը որոնք
Թիւրքիային պաշտպանելու անունով գրա-
ւեցին նրա երկրների մի մաս:

ԳԵՐՄԱՆԻԱ

Վիլհելմ կայսրի առողջական դրութեան
համար հետեւեալ տեղեկագիրը հրատարակ-
ված է «Reichsanzeiger» լրագրում, կայսրի

երեք բժիշկներից ստորագրված յուլիսի 11-ին:
«Պէտք չէ զարմանալ նորին մեծութեան շատ
շուտ չառողջանալու վրա, երբ ի նկատի ունե-
նանք նրա շատ արիւն կորցնելը, մտքի սաս-
տիկ յուզումը և իր ջղային դրութեան վրա
արած տպաւորութիւնը, երկար ժամանակ
սխորժակ չունենալը, բազմաթիւ և ցաւալի
վերքերը և արդէն տարիքը առած լինելը:
Այնու ամենայնիւ, նորին մեծութեան առող-
ջական դրութիւնը գոհացուցիչ է, քանի որ
գլխաւոր գործարանների պաշտօնները խան-
գարված չեն, թէպէտ շատ ժամանակ է
հարկաւոր որ նորից ստանան իրանց ոյժերը
կատարելագէտ: ձշմարիտ է թէ կայսրը կա-
րողացած է ելնել և իջնել սանդուղի աստի-
ճաններից, բայց դեռ չէ կարող երկար ժա-
մանակ քայլել: Թիւրքի և ռուսերի վրա գտն-
ված վերքերը մեծ մասով առողջացած են
բոլորովին, բայց թեւերը և ձեռքերը որոնք
սկսել են կամաց կամաց շարժումներ անել:
Չրերի վնասված լինելու պատճառով դեռ
չեն կարող կատարել իրանց սովորական գոր-
ծերը, օրինակ չէ կարող կայսրը կերակուր
առնել ուտել առանց ուրիշ օգնութեան:
«Այնու ամենայնիւ յոյս կայ, Աստուծո՛ւ
օգնութեամբ, որ երկար ժամանակից յետոյ,
ներգործական և կրաւորական մարմնակրթու-
թեամբ, ինչպէս և այլ կարեւոր միջոցներով
կատարելագէտ կառողջանայ»:

Բերլինի «Tageblatt» լրագրում կարգում
ենք հետեւեալ տեղեկութիւնները Նօրիլնդի
մասին: Ուժրագործ Նօրիլնդը սկզբնական
հարցաքննութիւններին ենթարկվեցաւ բան-
տի մէջ երեք օր: Առաջ քան թէ հարցաքն-
նութեան սկսվել բժիշկները քննեցին հի-
ւանդին և վճռեցին թէ կարող է յաջորդա-
պէս չորս օր ենթարկվել հարցաքննութեան,
օրական երկու ժամ միայն քննվելով: Նօրի-
լնդ մանրամաս տեղեկութիւններ է տվել
իր անձի և ընտանիքի վերաբերութեամբ
և խոստացել է բոլորովին ճշմարտութեամբ
խօսել, յանձնելով իրան իր դատաւորների
բարեսիրութեանը: Դաւաճանութեան օրը երբ
հարցաքննվեցաւ, ասած էր թէ մեղսակից-
ներ ունի որոնք պատկանում են իր կուսակ-
ցութեան և թէպէտ ոչինչ պատճառ չունի
նրանց խնայելու, բայց չի յայտնի նրանց
անունները: Այդ խոստովանութիւնից յետոյ,
պօլիցիան աշխատեցաւ գտնել մեղսակիցները,
բայց չաջողվեցաւ: Կալանաւորված մարդկե-
րանցից մի քանիսը որոնց վրա կասկած կար
թէ ծանօթ էին Նօրիլնդի դիտաւորութեան
հետ, հաստատ ապացոյցներ չը լինելով ար-
ձակվեցան: Հետեւապէս, այս առաջին հար-
ցաքննութեան մէջ աշխատեցան իմանալ թէ
նվեր են նրա մեղսակիցները: Նօրիլնդ պա-
տասխանեց հետեւեալը դրա համար եղած
հարցումներին: «Ոս ինքս առանձին կատա-
րեցի ինչ որ մտքումս գրած էի, ես ինքս
պատրաստել եմ իմ զենքերը: Նս միշտ դի-
տաւորութիւն էի ունեցել առանձին կատա-
րել դաւաճանութիւնը և վերջացնել կեանքս,
մի գնտակ զարկելով գլխիս: Այնու ամենայ-
նիւ, առաջ քան թէ կատարել իմ դիտա-
ւորութիւնս, ես յայտնեցի շատերին որոնք
չաշխատեցան հրաժարեցնել ինձ այդ դիտա-
ւորութիւնից: Ուրեմն չէի ընդունել թէ նրանք
չեն հաւանում իմ ծրագրիս: Բայց ինչ որ
էլ լինի, ես չեմ յայտնի նրանց անունները»:
Նօրիլնդի տված վերջին երեք հարցաքն-
նութիւնների հետեւեալը այս է: Նրբորդ
հարցաքննութիւնից յետոյ, բժիշկները խոր-
հուրդ արեցին և վճռեցին թէ պէտք է
զարգացնել հարցքննութիւնները, որով
հետեւ Նօրիլնդի դրութիւնը, կրած վերջին
աշխատութիւններից յետոյ, զգալի կերպով
ծանրացել էր»:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 10 յուլիս, 78

Ամեն հայ անհամբեր կը սպասէ պատգամա-
ւորներին վերադարձին, ընդարձակ տեղեկու-
թիւններ ստանալու համար: Յոյս կայ որ այսօր
(երկուշաբթի) կամ առաջիկայ ուրբաթ օր գալիք
շոգենաւով կը հասնին այստեղ: Եթէ այսօր գան,
կը փութամ նոցա մօտ երթալ և հինգշաբթի
օրուան փոստով կը գրեմ ձեզ երկարօրէն: Բեր-
լինի կօնգրէսը որոշած է բարեկարգութիւններ
և վերանորոգութիւններ մտցնել հայաբնակ տե-
ղերու մէջ. բայց թէ ինչ կը լինին այդ բա-
րեկարգութիւններ, չէ որոշած: Այժմ Բ. Դրան,
Անգլիայի և մեր պատրիարքարանի մէջ բանակ-
ցութիւններ լինելով պիտի որոշվին այդ բարե-
կարգութիւնները: Ազգային վարչութիւնը կը
սպասէ պատգամաւորներու վերադարձին, այս
մասին խորհրդակցելու համար: Նոցա հետ: Տա-
րակոյս չը կայ թէ պատրիարքարան պիտի աշ-
խատի իր բանակցութիւններու մէջ, որչափ կա-
րելի է, ընդարձակ բարեկարգութիւններ ստա-
նալ: Առ այժմ, ինչ որ կարողանանք ստանալ,
պէտք է այդ չափով բաւականանանք և պատ-
րաստուինք ապագային համար, որ ուրիշ անգամ
ալ անպատրաստ չը գտնուինք, երբ յարմար
առիթը պատահի, ինչպէս անպատրաստ էինք
այս անգամ: Ամեն հայ, ուր ալ գտնուի, պէտք
է որ այսուհետեւ իր ոյժերը կրկնապատկելով
աշխատի. արեւելեան խնդիրը այս անգամ այն-
պիսի զարկ տուաւ ամեն թիւրքած ազգերուն որ
այսուհետեւ հայու անգործութիւնը քրէական
յանցանք կը լինի, իր գոյութեան դաւաճանել
կը լինի: Թող մեր նշանաբանը լինի «աշխա-
տութիւն»:
Աշխատենք լուսաւորել Հայաստանի
ժողովուրդը որ բարոյապէս զօրանայ. աշխա-
տենք ընկերութիւններ կազմելով ապանովել նորա
դրութիւնը, ծաղկեցնել արհեստները որ նիւթա-
պէս զօրանայ, Այն ժամանակ վստահ լինինք
թէ ապագայն մերն է:

Հ.

ՄՇԱԿԻ ՀՅՈՒՄՈՐԻՍՏԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 19/31 յուլիսի: «Голосъ» լրա-
գրին հեռագրում են Կ. Պօլսից, որ հայոց
ազգային ժողովը Կ. Պօլսի մէջ վճռեց մշա-
կել Հայաստանում մտցնելու վերանորոգու-
թիւնների ծրագիրը և ներկայացնել այդ ծրա-
գիրը Սուլթանին: Անցեալ շաբաթ օրը հա-
ւաքվեցաւ մինիստրների խորհուրդը որ զեղա-
ված էր միմայն հայոց խնդրով: Մի առան-
ձին յանձնաժողովին, որ յուլիսի կէսին ու-
ղեւորվելու է դէպի Հայաստան և որի տուաշ-
նորդը լինելու է ծագումով քուրդ Ահմեդ-
Նէֆիլի-բէյ, դիտաւորութիւն կայ տալ
լրագոր իրաւունքներ ամեն տեսակ արգելե-
րների առաջն առնելու համար, որոնք կարող
են հանդիպել վերանորոգութիւնները զործա-
դրելու ժամանակ, մանաւանդ որ յանձնաժո-
ղովին օգնական տրվում է 12,000 հօգուց
բողկացած զօրաբաժինը: Եթէ քուրդները որ
և է ընդդիմադրութիւն անեն, յանձնաժո-
ղովը առաջնորդին կատարեալ իշխանութիւն
է տրվում վարել նրանց հետ իր կամքին
համեմատ: Այստեղ լուր է ստացված, որ
Ձէյթունի տարերում, Հալէպի Վիլայիթի մէջ
հայերը ապստամբվեցան: Այդ լուրը խոր
տպաւորութիւն է գործել Բ. Դրան վրա:

ԲԻՐՈՒԻ, 19/31 յուլիսի: Այսօր աւստրիա-
կան զօրքերի սահմաններ անցնելու ժամա-
նակ սաստիկ շոք եղանակ էր, որի պատճառով
սօղաւանները մեծ ներութիւններ էին կրում:

ՎԻԵՆԱ, 19/31 յուլիսի: «Polit. Cor-
resp.» հաղորդում է որ Բ. Դուռը տեղե-
կութիւն է ստացել թէ Ալբանիայի Լիզան
զենաւորվում է: Սերբիայի և Չէրնօգորիայի
զենաւորվելը սպառնալի կերպարանք է ստա-
նում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ
97 1/8 ռ. երկրորդ 96 ռ. 5 Կ. երրորդ 96
ռ. 5 Կ., չորրորդ 95 ռ. 75 Կ., ներքին ա-
ռաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ
234 ռ. 50 Կ., երկրորդ 235 ռ., արեւելեան
95 ռ. 5 Կ., ոսկի 7 ռ. 78.: Տրամադրու-
թիւնը հանդարտ է:
